ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

638.2
Հ-14

638.2 (47-92)

ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА Т.С.С.Р.
Инв. № 1084 2

1935 թ.

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԸ ԱՍԽՀ ՀԱՄԱՐ

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտես. բաժին
Բագու — 1935

63.8.2
11 JUL 2013
Z-74

Թարգ. Ս. Գասպարյան
Խմբագիր Լ. Դանիելյան
Թողարկու և սրբագրիչ Ա. Արխան

Baş Mətbuat mydirligi Myvəkkilligi № 2865. Sifariş № 355. Tiraz 3000
Istehsalata verilmiş 18/III—35. Capa imzalanmış 21/IV—35. Cap listi 1/2
Kaqız formatı 72×105 Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına
„Kitab Sarajı" Bakı, Əli Bajramov kycəsi.

01 OCT 2010

1935 ԹՎԻ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆԱՆՆԵՐԸ ԱՍԽԱ ՀԱՄԱՐ

ա) Շերամի վորդի կերակրումը.

1. Պետք է կերակրվեն բացառապես այն շերամի վորդերը, վորոնք ստացվել են շերամի սերմի գործարաններում պատրաստած սերմից։ Չի թույլատրվում գյուղացիների պատրաստած սերմը տաքացնել — կենդանացնել և դրանից ստացված վորդերը կերակրել։ Յեթե հայտնաբերվի գյուղացիական սերմից աճեցվող վորդ, պետք է վոչնչացնել։

2. Շերամի վորդ պահելու համար հատկացվում են այնպիսի շենքեր վորոնք բավականաչափ լուսավոր, մաքուր են, և հարմարեցրած են ոդափոխության համար։

3. Առաջին յերեք հասակներն անմպայման պիտի կերակրել տաքացված շենքերում—բնակելի տներում, իսկ վերջին յերկու հասակներում թույլատրելի յե կերակրել թեթև տեսակի (յեղեգնից և այլն շինած) շենքերում (քոմերում)։

4. 25 գրամմանոց մի տուփ շերամի սերմ աճեցնելու համար պահանջվում է 30 քառակուսի մետրից վոչ պակաս տարածություն։

5. Վորքան հնարավոր է սկսել ամենավաղ աճեցումը, վորպեսզի կարելի լինի խուսափել շոգերին կերակրելուց։ Դաշտավայրային շրջաններում կենդանացումը սկսել ապրիլի 1-ից, իսկ լեռնային շրջաններում—ապրիլի 5-ից։

Կլիմայական պայմանների համաձայն՝ կենդանացումն սկսելու ճշգրիտ ժամկետները սահմանել տեղերում։

6. Մինչև վորդերի կերակրման շրջանը վորդանոցները պետք է նորոգված լինեն, լավ մաքրված՝ ախտահանված, սպիտակացված։ Ինվենտարը պիտի լվացված լինի տաք ջրով՝ մոխրաջրով և չորացված արևի տակ։ Յեթե հատակը հողից է, անհրաժեշտ է ծեփել և գլանել, վոր փոշի չլինի։

23.180

7. Կերակրելու տեղի տարածությունը մեծացնելու և սանիտարական-առողջապահական պայմաններ ստեղծելու նպատակով՝ անպայման պետք է շինել 2-3 հարկանի դարակներ՝ հասարակ տեսակի, տեղական շինանյութից։ Առաջին հասակների համար ավելի հարմար է շինել կախած դարակներ, իսկ վերջին հասակների համար՝ սովորական, կանգնած դարակներ։

8. Անհրաժեշտ է հաճախակի ոդափոխել, վորդանոցները ամեն որ ավելի։

9. Առաջին յերկու հասակներում վորդերին տրվում է կտրված տերև, 3-րդ հասակում՝ ամբողջ տերևներ, իսկ 4-րդ և 5-րդ հասակներում՝ ճյուղերով, տերև. կերակրումներ որական հասցնել արնվազը՝ հետեվյալ քանակի՝

1-ին հասակի համար—7—8 անգամ.
2-րդ և 3-րդ „ „ —6—7 „
4-րդ և 5-րդ „ „ —4—5 „

10. Շերամի վորդի տակի փոված քը փոխել առաջին 3 հասակներում քնից հետո մեկական անգամ, իսկ 4-րդ և 5-րդ հասակում տակը փոխել 2 անգամ՝ ճյուղերով։

11. Կերակուրը պետք է լինի թարմ, վոչ թաց, դրա համար տերևները պետք է քաղել առավոտյան ցողից հետո և իրիկնադեմին։ Չի կարելի նույնպես քաղել փոշոտ և ցեխոտ տերևներ։

12. Քաղած տերևը պետք է պահել չոր և հով շենքում, փռելով բարակ շերտով և հաճախակի շրջել վորպեսզի չընթոշնի։

13. Վատ յեղանակի դեպքում պետք է ունենալ տերևի մի որվա պաշար։

14, Քնի ժամանակ վորդին անհանգստացնել չի կարելի, ուստի այդ շրջանում կերակուր քիչ է տրվում (հաշվի առնելով չքնած վորդերին)։

15. Յեթե վորդերը միաժամանակ չեն քնում, ապա արթնացած վորդերին պետք է զգուշությամբ վերցնել և առանձին խումբ կազմել։

16. Կերակրելու շրջանում յեթե հիվանդության դեպքեր յերևան կգան անհապաղ կանչել տեղամասային հրահանգչին կամ գյուղական լիազորին։

Գրադարան
Գրադ. Գիտ. Գրադ.
ՀԱՍՀ-ում

ԿՅ 661-63

Յեթե ուշանում են հրահանգիչը կամ գյուղլիազորը, շերամապահը պետք է առանձնացնի առողջ վերդերին՝ փոխելով տակի փոված քը, իսկ փոված քը հիվանդ վորդերի հետ միասին արագորեն հեռացնի, մաքրի, լվանա վարակված դարակները և ավելի վորդանոցը։ Յեթե վորդերը մասսայորեն սատկում են, ապա առողջներին պետք է փոխադրել մի ուրիշ շենք և ամեն որ փոխել տակի փոված քը։

17. Բոժոժացախը պետք է պատրաստել 5-րդ հասակի սկզբին քոլերից և այլ բույսերից (վոչ հոտավետ և վոչ ծակծկող)։ Արգելվում է գործածել թեղու ցախ, վորովհետև դա կեղտոտում է բոժոժը։ Բոժոժացախը պետք է դարսել 5-րդ հասակի 9-10-րդ որը, հավասարաչափ և վոչ խիտ։

18. Խմբից հետ մնացող, բոժոժ չանող վորդերին անհրաժեշտ է առանձնացնել և դնել ուրիշ դարակների վրա։

19. Բոժոժացախից բոժոժը պետք է պոկել վորդերի՝ բոժոժացախի վրա մասսայորեն բարձրանալու ժամանակից հետո՝ 7-8 որից վոչ առաջ։

20. Բոժոժի բերքը հավաքելիս անհրաժեշտ է բոժոժը մաքրել „քերքերից“ („սդորից“) և սկզբնական տեսակավորումը կատարել՝ ջոկելով բծավոր և փափուկ բոժոժները, դասավորելով վերջիններս ըստ խմբերի։

21. Բոժոժը պիտի հանձնել գնման կետերին՝ բոժոժաքաղից 1-2 որից վոչ ուշ։

22 Բոժոժը պիտի հանձնել գնման կետերին կողովներով առավոտյան և իրիկնադեմին (խուսափել շոգ յեղանակից)։

Յեթե սերմը կենդանացնում-տաքացնում են իրենք՝ շերամապահները, պետք է ստեղծվեն նորմալ պայմաններ, այսինքն՝ սերմը պետք է փռել բարակ շերտով թղթի վրա կամ սերմի բաց տուփում, վորը պիտի դնել տաք սենյակում՝ սեղանի վրա։ Սենյակը պիտի ոդափոխվի։

Արգելվում է սերմը փաթաթել վերմակի մեջ, դնել կըռնատակին, կենդանանալու համար դնել արևի տակ, գոլորշու վրա և ոջախի մոտ, վորովհետև կենդանացնելու այդ միջոցները սաստիկ ազդում են վորդերի յելնելու վրա, բոլոր սերմը չի կենդանանում, վորդերը հիվանդանում են և կոտորվում։

բ) Թաքուծություն.

Բարձրացողունավորներ

Բարձրացողունավորները պետք է տնկել աշնանը՝ հենց վոր տերևները թափվեն և գարնանը՝ մինչև բողբոջները բացվելը։

Փոսերը պետք է փորել տնկելուց մի ամիս առաջ։

Մինչև տնկելը պետք է կտրել վնասված արմատները և 3 հիմնական շյուղերը կարճացնել 30—40 սանտիմետրով։

Առաջին անգամ պիտի ջրել տնկելուց անմիջապես հետո, իսկ հետո ամսական մեկ անգամ։

Ջրելուց մի քանի որ հետո բնի շրջակա տարածությունը պիտի փխրացնել։

Թոխմաչար

Թոխմաչար տնկելու համար հողը հերկվում է 30—40 սանտիմետր, ապա տնկում են յերեք մետր հեռավորությամբ շարքերով և տնկիները մեկը մյուսից մեկ մետր հեռավորությամբ։

Յեթե տնկիները նախապես չեն ձևավորվել, ապա տնկելուց հետո պետք է կտրել 1,5 մետր հողից բարձր։ Յերևացող շյուղերից պետք է թողնել վերևի յերկու շյուղը, վոր միմյանց դեմ են գտնվում։ Այդ շյուղերը հետևյալ տարին կտրվում են 30—40 սանտիմետրով և հետագայում դրանք հանդիսանալու յեն վորպես հիմնական ճյուղեր։

Ներանցից աճող կողքի շյուղերն ամեն տարի՝ վորդերը կերակրելու ժամանակ կտրվում են կոկիկ, իսկ վերինները 1-2 աչքով և այդպիսով ստացվում է պակի ձև՝ գագաթին յերկու ուռոցքներով։

Խնամքը յեվ շահագործումը.

1. Աշնան, ձմրան ընթացքում և գարնան սկզբին պետք է փորել բարձացողուն թթենու ցողունի բնի շուրջը յեղած տարածությունը և հերկել կամ համատարած փորփրել թոխմաչարի շարքամիջները։

2. Ճյուղերը կտրտվող թթենու տունկերը ջրել գարնանը վորդի կերակրումը վերջացնելուց հետո և մի-մի անգամ ել ջրել հուլիսին ու ոգոստոսին։ Ջրելուց հետո փխրացնել բնի շրջակա տարածությունը և թոխմաչարի շարքամիջները։

3. Թթենու ճյուղի և շյուղերի անփույթ և անճիշտ կտրելը հիվանդություններ է առաջ բերում և արագ փչացնում թթենին, ուստի կտրելու գործիքները պետք է լավ սրված ու մաքուր լինեն, և թթենին պետք է կտրել կանոնավոր։

ՀՀ Ազգային գրադարան
NL0286904

10 կոպ.

23.180

TURKMENISTAN DƏVLET KITAPHANASЫ
ТУРКМЕНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА

AƏŞÇ XALQ TOPRAQ QOMISARLЫQЫ

1935—çi ILDƏ AƏŞÇ YCYN

IPƏKCILIKDƏN AQIRONOMIK QAJDALAR

AZƏRNƏŞR
Kent-təsərryfat şö'bəsi
Bakы—1935